

ՇԱՀԻԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ
ՏՂՈՑ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

Ա. Երջան, Թ/ւ 52

ՍԱՆՏՊԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Գարուն (պատկերով)	ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ
Բարի սասանան	ԵՂԻԱ ՌՍԻԿԵԱՆ
Ճոզովրդական երգեր	ԱՍՈՒՂԻՍ
Գիբերը ծանրութիւն ունի՞ն	ՅՈՎՀԱՆՆԵՆԷՍ ՊԱՊԷՍԵԱՆ
Կարամախիկն (ժողովրդական պատմուածք)	ԱՅԾԵՄԵՆԻԿ
Զգոյիւծը (պատկերով)	
Մանկիկը բոչնիկին	Ա. Ն. ԽԱԽԱՄԵԱՆ
Արփիկէին խօսերը	Ա. ԿՈՄԴԱՆԵԱՆ

Թերթոն, Հանելուկ, Հատուական հարցում, ելլն.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈՒՍՈՑ ԵՒ ԳՍԻԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 30 դրուչ : Վեցամսեայ բաժնեզին չկայ :

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ Տարեկան 7 Փրանք :

ԲԱՅԱՐՁԱԿԱՊԷՍ ԿԱՆԽԻԿ

Բաժնեզինները կտրելի է ղրկել Օսմ. մանտարութով, փոխ՝ գրով, եւ կամ դրոշմաթուղթով (20 հատը 20 դրուչի հաշուով) :

Մանուցման, բաժանորդագրութեան եւ թերթին վերաբերող ամէն կարգի գործառնութեանց համար ղիմել մի՛ միայն՝

Ս Ա Գ Ա Ե Ա Ն Ի

{زاغيك غزته سي} درعليده غلطده قورشونلي خاننده نومرو ۷

«Մ Ա Ղ Ի Կ» Հ Ա Ն Դ Է Ս

Գ. Պոլիս, Ղալաթիա, Գուրչունյու խան, Թիւ 7

REVUE "DZAGHIK,"

Constantinople, Galata, Kourchoum Han, N° 7.

Գ/ին 20 փարա

Տպագրութիւն ՍԱԳԱԵԱՆ, Կալարա



HYGIÈNE BEAUTÉ
CRÈME SIMON

ՎԱՅԵԼՉԱՍԷՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ Կ՛ՈՒՋԵՆ ՊԱԶՊԱՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏՐ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃՇՄԱՐԻՑ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ԿԼԻՍԷՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՀՆԱՐՈՒԱԾ 1860

ԱՄԵՆԱԶԻՆ

ԳԵՂ ԳՅԿԱՅՆՈՂ ՔՐԷՄԸ

▶ ԿԸ ԳՏՆՈՒԹ

— ԴԵՂԱՐԱՆԵՐՈՒ — ՀՈՏԵՂԻՆԱՑ ԽԱՆՈՒԹԵՐՈՒ —

— ՊԱՉԱՐՆԵՐՈՒ ՄԷՉ —

ԳՆԵԼՈՒ ԱՏԵՆ Լառ Ողջաբարձիան Ընկել —

— ՎԱՃԱՌԱՆԻՇԻՆ ԵՒ ՄԵՐԸԷՂ —

ԿԵՂԾ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ԲՐՆՉԱՓՈՇԻ

ՕՃԱՌ

ՍԻՄՈՆ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆ

ՍՈՒԱՆՑ ՊԻՍՏՈՒԹԻ

ԲԱՅԱՐՉԱԿԱՊԷՍ ՄԱՔՈՒՐ

▶ Ժ. ՍԻՄՈՆ - ԲԱՐԻՉ ▶

ՇԱՂԻԿ

ՏՅՈՒՆՆԵՐ Ս Ս, Դ Ս, Ե Ս, Ն

Խմբագիր Յակոբ Տէր. Յակոբեան

(724) Ի. ՏԱՐԻ — ԹԻԻ 52

8 ՄԱՅԻՍ 1908

Գ Ա Ք Ո Ի Ն

—•••••

Գարունն եկեր, բնութիւնն հագեր
Իր խառուտիկ նոր բեհեզներ .
Լեռ, դաշտ, հովիտ ու պարտէզներ
Նոր հարսներու պէս զարդարուեր :

Ծաղկունք ծլեր կը ծիծաղին
Աղջիկներուն ծիծաղն ունին ,
Ծիծաղն անոնց աղւոր աչքին ,
Աչքին՝ ուր բիբջ կոյս կը ժպտին :

Ամենուրեք բնութիւն շքեղ
Նուագհանդէս տա՛յ ձայնագեղ .
Կոհակաչարժ լարերով՝ ծով ,
Անտառ՝ փողերդ թռչուններով .

Արօտ՝ մայող գառնուկներով ,
Սրինգն հովուին՝ զիլ սոյլերով .
Ու մեղեդի տաւղէ առուակ .
Ու ստեղի՝ հողմն ի պուրակ :

Տղղիւն մեղուին , ճանճին բզզիւն ,
Ճչիւն ճպռին , ճնճղին ճճիւն ,
Գուռնք՝ վայրի երէններուն
Հետ՝ տաարակաց վուվուններուն ,

Ու սօսափիւնք տերեւներուն՝
Հետ գանգիւնաց անձաւներուն
Ի՞նչ հեշտ մերթ խուժ հանեն նուազ :
Խառն այլ ունին շեշտ ներդաշնակ :

Բնութեան վսեմ այս տաճարին
Երաժիշտներ գեղգեղագին
Ձե՞ն աւելի զմայլածայն
Քան շատ դպրաց նոր եռածայն :

Ամենուրեք՝ նկարչատուն ,
Ու նկարներն ո՞րքան նախշուն .
Գոյնի , գիծի , լոյսի , շուքի
Կիտուածքն , յեռմունքն ի՞նչ բիւրաղզի :

Ո՞ր ճարտարեղ արուեստգիտին ,
Քան իմաստուն բնութեանն , վրձին
Մրցիլ զօրէ . նոյն ինքն Աստուած
Իր հանճարն է բնութեան տուած :

Բնութեան հարսնիքն է միշտ գարուն ,
Հոն հարսնեւոր՝ Փլորայք սիրուն ,
Փիլոմէլն հոն կ'ածէ դաշնակ ,
Պարեն զեփիւռ , տերեւ , այլեակ :

Արեւն ոսկի հոն կը տեղայ ,
Տեղան ծաղկունք հոն շափիւղայ ,
Դալարք իրենց վառ թաւիչներ ,
Օժիտ սփռեր սիրանուէր :

Կեանքիս ձմեռն հագնի , գարնան ,
Ծաղիկ , ծիծաղն իր մանկութեան .
Ու , նորապրիլ Չատիկին հետ ,
Նոր յարութեանն իր սեթեւեթ :

Բիւրածիծաղ, բիւրածաղիկ
Ո՞վ դու գարուն մեր գեղեցիկ,
Վերկենցաղի հետդ, ամէ ամ,
Կեանքին թողամած յուշոյն երամ:

1908 Ապրիլ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ



Գարունը եկաւ

“ԾԱՂԻԿ”Ի ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԸ

Այսօր կը հրատարակուի Ծաղիկի իրր Մանկանց Հանդէս հրատարակութեան 52րդ թիւը, որով առաջիկայ շաբթու կը մտնէ իր երկրորդ շրջանին մէջ: Ծաղիկի Տնօրէնութիւնը բացարձակապէս որոշած է շարունակել սղոց և դպրոցականներու նուիրուած այս հանդէսը, և մտադրած է աւելի կատարելագործել ու զարգացնել զայն:

Միւս կողմէ կը ծանուցանենք մեր այն բաժանորդներուն և գործակալներուն, — որոնք դեռ չեն վճարած իրենց պարտքը — անմիջապէս ուղարկել իրենց բաժնեգիրը որուն փոխարժէքը ամբողջովին առած կը համարուին արդէն: Հակառակ պարագային առաջիկայ թիւէն պիտի դադրեցնենք թերթ զրկելը:

Այժմէն բացուած է նաև Ծաղիկի Բ. Շրջանին բաժանորդագրութիւնը: Պոլիս և գաւառները տարեկան 30 դրուշ, և արտասահման 7 ֆրանք:

Բաժնեգիրները կարելի է զրկել մանտա-բօսթով, նամակագրուածով կամ փոխ-գրով:

ԲԱՐԻ ՍԱՏԱՆԱՆ

Դանիէլ, ծաղկահասակ պատանի մը, իր ծեր մօրը քով ապարած էր միշտ: Ի՛նչ դժբաղդութիւն երբ մեռաւ մայրիկը: Իր զաւակը գործնական կեանքի պզտիկ տաղտուկներէն զերծ պահելու հոգածութիւնով՝ անոր ա՛յնքան երես տուած էր մայրը, որ անբան չէր հասկնար ո՛չ առօրեայ կեանքէն, ոչ դրամական խնդիրներէն:

Անկարգութիւնը մտաւ երբեմնի այնքան սիրուն տան մէջ: Տղան, առանց հաշուելու, ասոր անոր կը շուայլէր իր ունեցածը. ոսկիները աւազի պէս կը հոսէին ձեռքէն: Այսպէս, իր բարի մօր բոլոր խնայողութիւնները սպառեցան շուտով: Փոխառութիւն ըրաւ: Օրին մէկն ալ անօթի մնաց վերջապէս...

Բայց երիտասարդութիւնը կը յուսայ միշտ: Քունը ճաշ մը ըսել է, մտածեց, ու պառկեցաւ: Բայց ի՛նչ պատրանք. այսպէս ճաշելու համար նախ քնանալ հարկ էր, և սակայն պարապ ստամոքսը մարդս քնանալու տրամադիր չընէր:

Հարիւր անգամ անկողնին մէջ դառնալէ ետք՝ մոմը վառեց ու, առանց նայելու, գիրք մը առաւ գրադարանէն: «Ջրօսպի Գիտութիւն» էր առածը, որուն մէջ տեսագիտական խաղ մը իր ուշը գրաւեց:

«Եթէ քանի մը վայրկեան կարմիր ներկուած սատանայի պատկեր մը դիտէք ուշադրութեամբ, (կ'ըսէր հեղինակը) և յետոյ աչքերնիդ դարձնէք ձեղունը, հոն պիտի նշմարէք կապոյտ սատանայ մը, որ կը խաղայ ու կը պարէ: Սենեակի մը մէջ այս խաղը փորձելէն աւելի զուարճալի ի՛նչ կայ»:

Հեղինակը աւելցուցած էր. «Նոյն երեւոյթը տեղի կ'ունենայ եթէ ձերմակ սատանայով մը ընէք փորձը՝ սեւ ձեղունի մը վրայ»:

Փորձի համար ձերմակ, շատ սիրուն սատանայ մը գծագրուած էր գիրքին մէջ, և ըսուած. «Քանի մը վայրկեան նայեցէք անքրթիթ այս պատկերին. յետոյ աչքերնիդ դարձուցէք ձերմակ թուղթի մը կամ շատ լուսաւորուած տեղ մը. հոն որոշակի պիտի տեսնուի գորշ սատանայ մը»:

Դանիէլ գործադրեց այս պատուէրը: Երկար ատեն դիտեց ձերմակ սատանան և յետոյ, գլուխը բարձին վրայ ծռած, բաց գիրքը երկու ձեռքին մէջ, դիտեց ձեղունին վրայ՝ մոմին լոյսով կազմուած լուսապսակը:

Ո՛վ գարմանք, սեւ սատանայ մը կը խաղար, կ'երթար, կուգար, Դանիէլի գլխու շարժումին ուղղութեամբ:

.

Յանկարծ ձեռքի գիրքէն բան մը ինկաւ գետին, չոր աղմուկով մը :

Տասը Քրանքնոց մըն էր ($47\frac{1}{2}$ դրուշ) :

Դանիէլ շփոթած, հարցնելու պէս՝ պզտիկ սատանային նայեցաւ և վերջը աչքը նորէն վեր ուղղեց... : Սեւ սատանան կը խաղար տակաւին... : Նոյն չոր ձայնը նորէն լսուեցաւ... ու ոսկի դրամ մըն ալ ինկաւ գիրքէն : Հրա՛շք. սիրտը ուժգին մը կը բարախէր. երրորդ մը նորէն ինկաւ : Յուզումով թօթուեց գիրքը, չորրորդ մը, հինգերորդ մը նորէն ինկան... :

— Կ'երազեմ թէ արթուն եմ. անօթութիւնը զիս զգայախաբութեան մատնեց արդեօք : Բայց ո՛չ, այս դրամները հնչեցին, ահաւասիկ հոս են հինգն ալ :

Ինքզինքը ժողվեց, շշափեց. ոտքի ելաւ, քալեց, յետոյ քիչ մը հանդարտելով՝ քահքահ խնդաց :

— Ասոր մէջ կախարչութիւն չկայ (ըսաւ), բան մը չեմ հասկնար. բայց գիտեմ որ այս գիրքը իմն է, ինչպէս նաև դրամները. գալով սատանային՝ ան բարի սատանայ մըն է, շնորհակալ եմ որ վաղուան ճաշ շնորհեց :

Մոմը մարեց և յոգնութենէն ու յուզումէն պարտասաճ, քընացաւ :

Բարի սատանային դրամով Դանիէլ քանի մը օր ապրեցաւ և աւելի խնայասէր եղաւ : Անկէ ետքն ալ իր պիւտձէն հաւասարակըշուելով հանգիստ կեանքով վարեց :

Զմեռ իրիկուն մը, Դանիէլ վառարանին քով մինակ, կրակին հետ կը խաղար իր ծերուկ մօրը հետ անցուցած երջանիկ օրերուն վրայ մտածելով : Ունեկիէն բարձրացած կայծերը վար իյնալով՝ իրեն յիշեցուցին այն ոսկիի տարափը, որ հին գրքէն տեղալով զինք անօթութենէ աղատած էր : Եւ հեռաւոր յիշատակ մը արթնցաւ մտքին մէջ :

— Այո՛, այո՛ (գոչեց ուրախութեամբ) միտքս կու գայ որ մայրս շատ վնասուեց այն ոսկի դրամները, զորս ինծի նուէր տալու համար պահած էր : Այն ատենն էր որ «Չքօսայի Գիտութիւն»ը գնած էի, և որուն թերթերը մայրս ձեռքովը կտրած էր : Խեղճ կինը առանց բան մը ըսելու ոսկի դրամները այդ գիրքին ծոցը դրած էր, որպէս զի օր մը այսպէս իմ նեղ օրիս հասնէր անակընկալը :

Եւ մայիսի ցօղին նման վճիտ արցունքներ հոսեցան աչքերէն ու մրմնջեց :

— Բարի մա՛յր, ուրեմն դ՛ճն էիր որ կը հօկէիր զաւկիդ վրայ :

Թարգմանեց ԵՂԻԱ ՌՍՏԻԿԵԱՆ

Օրօր օրօր քներ ես,
 Ծածկեր եմ քրաներ ես.
 Գամ շարերդ⁽¹⁾ տուն տանիմ,
 Վարդի նման բացուեր ես:
 Վարդին տակերը ժուռ դաս,
 Իրիկուրները տուն դաս,
 Հօրդ ու մօրդ արեւ տաս,
 Դրացներուդ բարեւ տաս:
 Վարդենի ու նըռնենի,
 Դուն ի մեր պաղչան պիտէիր,
 Ո՛վ անցնէր՝ վարդէդ առնէր,
 Ո՛վ դառնար՝ կարմիր խնձորէդ:

* * *

Աչուն էր եղաւ դարուն,
 Զուրն ի վեր երթանք ես ու դուն.
 Անոնք երբ ծաղիկ քաղեն,
 Գիրկ ու ծոց առնենք՝ ես ու դուն:
 Անոնք ո՛ր ատեն խմեն,
 Վարդ ու նուռ քաղենք ես ու դուն:
 Քաղեմ ու ճէսդէ ընեմ
 Արմաղան⁽²⁾ խրկեմ հայրիկիդ
 Առնէ ու քնդին դնէ
 — «Աս իմին սիրան կու մանի⁽³⁾»:
 Պաղչան կապեմ կախ օրան,
 Ծառէ ի ծառ շուքերն է վրան.
 Ելլէ հովերն ներքեւն ի վրան
 Տանի քու օրրանն ու բերէ:
 Տանի քու օրրանն ու բերէ,
 Սարին պլպուլը օրօր կանչէ:

Ժողովեց՝ ԱՍՈՒԼԻՍ

(1) Շար = Մանկիկներու օրրանին վրայ ձգուած ծածկոց:

(2) Արմաղան = Նուէր:

(3) Կու մանի = Կը նմանի

ԳԻՐԵՐԸ ԾԱՆՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՐ

Ամէնուն ծանօթ է թէ դպրոցականները իրենց ուսման շրջանին մէկ մեծ մասը գրեչով կ'անցընեն :

Ուսանողները երբէք ուշադրութիւն ըրած են թէ իրենց գրած գիրերը ծանրութիւն ունին : Ասիկա թէև շատ պարզ է և ամէն մարդ կրնայ խորհիլ, բայց վստահ եմ որ երբէք խնդրոյ առարկայ չեն ըրած :

Ուստի այժմ ծանօթացնենք թէ՛ գիր մը ո՛րչափ ծանրութիւն ունի :

Ես կատարեցի այս փորձը : Ծատ թեթեւ իրերը կշռող կշիռով մը թերթ մը թուղթին մէկ չորրորդ մասը կշռելէ վերջ մէկ էջին վրայ համառօտ մը այժմեան նիւթը գրեցի . գիրերը չորցնելէ վերջ կրկին կշռելով տեսայ թէ՛ նախորդ կշիռէն մէկ սանթիկրամ աւելի եկաւ . ըսել է թէ այս մէկ սանթիկրամ ծանրութիւնը յիշեալ էջին վրայ գտնուող 500 գիրերու ծանրութիւնն էր : Հետեւաբար 100 գիրի ծանրութիւնը 2 միլիկրամ (խաշխաշի 3—4 հունտին չափ) ըլլալով՝ թերթ մը նամակին, որ միջին հաշուով երկու հազար գիր կը պարունակէ, գրերու ծանրութիւնը պիտի ըլլայ հետեւեալը . $2000 : 100 \times 0,002 = 0,04$ սանթիկրամ :

Եթէ հետաքրքիր ուսանողներ կ'ուզեն զիտնալ միայն մեկ գրին ծանրութիւնը, իրենց շատ անհաւատալի պիտի թուի երբ ըսեմ թէ՛ վերոյիշեալ խաշխաշի 3 կամ 4 հունտին արիւր մասէն երկուքը մէկ գիրի ծանրութիւնը եղած կ'ըլլայ, բան մը զոր փորձելը անկարելի է :

Մեր խնդրոյ առարկայ ըրած նիւթը աւելի գիւրամատչելի ընելու համար աւելի մեծ հաշիւ մը կարեւոր է : Ենթադրենք թէ՛ քաղաքէ մը (արուարձաններով մէկտեղ) շարթուան մէջ երկու հազար նամակ մեկնի և իւրաքանչիւր նամակ մէկ թերթ պարունակէ : Հետեւաբար $2000 \times 2000 : 100 = 0,002 = 8000$ սանթիկրամ կամ 80 կրամ : Ըսել է թէ երկու հազար նամակ պարունակող պայուսակ մը 80 կրամ սոսկ գիրի ծանրութիւն կը կրէ : Որո՞նք մտքէն կ'անցնէր ասիկա . . . :

Այս մանրակրկիտ հաշիւները փոքրիկ դպրոցականներու հրամանելով՝ իրենց նորաբողոք ուղեղները յագեցնելու գիտաւորութիւն չունիմ : Միայն նպատակս ու միակ փափաքս այն է թէ՛ ուսանողներ յիշեալ չնչին ու կարեւորութիւն չունեցող այլ սակայն անուղղակի կերպով օգտակար նկատուող խնդրին ուշադրութիւն ընելով, իրենց մասին դպրոցական դասեր հանեն : Խորհեցէք թէ՛ մեր շուրջը տակաւին կան անանկ մանր մունր բաներ

որոնց վրայ աչք անգամ չենք դարձներ: Մարդ դիտելու է ամէն բան և տղայ մը իր առօրեայ դասերէն դուրս զարգանալու զուարթառիթ միջոցներ պիտի կրնայ ունենալ. յաճախ պզտիկ ու աննշան կարծուած բաներ մեծ կարեւորութիւն ունեցող խնդիրներու լուծումը կրնան տալ: Ասկէ զատ ձանձրոյթի անտանելի ժամերուն՝ անոնք զուարճութիւն պիտի մատակարարեն:

Ուստի պզտիկները իրենց մտքին մէջ թող քանդակեն և միշտ յիշեն թէ ինչպէս որ «գիրքերը անգամ ծանրութիւն ունին», կըրնանք նաև ամենաչնչին խնդրի մը պահուն՝ անկէ բարոյական դաս մը հանել գէթ:

Եւրոկիս

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊԷՍԵԱՆ

ԿՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԻՆԸ

Բ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Մայրամուտի պահուն նստած էի կանանչ և բուրումնաւէտ ծաղիկներով պսակուած մենաւոր բլրակի մը վրայ: Բնութիւնը դիւթիչ էր: Վարը գլգլացող ու վճիտ առուակին եզերքը, ձիւնի նման ճերմակ գառնուկներ կ'արածին, որոնք իրենց մեղմ մայիւններով կ'ուրախացնեն այն պատանեկին սիրտը, որ զիրենք արածելու բերած էր: Կը լսեմ փոքրիկ թռչուններուն ճլվլումները ուրոնք սլացած են կապոյտին բարձրութիւնները: Կը տեսնեմ հոս՝ քովս, փթթած գեղեցիկ գարնանածաղիկը: Ահա հովիւը իր սրինգի ձայնին թրթռումներով կը հմայէ հոգիս. կը հիանամ, աչքիս առջև պարզուած տեսնելով զարմանահրաշքնութիւնը, բայց ուրախութեամբ ողողուած սիրտս չեմ կարող պարզել, միայն կրնամ զգալ ու վայելել այս տեսարանին քաղցրութիւնը:

Երգնկայի Կեղր. վարժարանէն
ԼԵՒՈՆ Մ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

«ԾԱՂԻԿ» ՆՈՒԻՐՈՂՆԵՐԸ

Անցեալ շրջանին բաւական մը գրասէր անձնաւորութիւններ Մաղիկ նուիրեցին գաւառային և պոլսական վարժարաններու: Կը խնդրենք նոյն անձնաւորութիւններէն որ հաճին տեղեկացնել թէ նոր շրջանին մէջ ալ շարունակե՞նք իրենց նուիրած թերթերուն առաքումը:

ԿԱՂԱՄԱԽԻՆ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔ)

Երկու երիտասարդներ, Եդուարդ և Գառնիկ, որ մը դատաւրան ներկայացան: Եդուարդ դատաւորին ըսաւ,

— Տէ՛ր, երեք տարի առաջ ճամբորդելու համար մեկնած էի և այս մարդը լաւագոյն բարեկամս կարծելով իրեն տուի թանկագին քարէ շինուած մատանի մը, որպէս զի պահէ: Եւ այսօր զայն ինձ վերադարձնելու կը մերժէ:

Գառնիկ ալ ձեռքը սրտին վրայ դնելով ըսաւ. — Տէր դատաւոր, պատուոյս վրայ կ'երդնում որ երբէք այդ մատանին չեմ ճանչնար: Բարեկամս իրաւունք չունի:

— Եդուարդ, (ըսաւ այն ատեն դատաւորը) ապացոյց մը ունի՞ս ըսածդ հաստատող:

— Աւաղ, ո՛չ: Այն վայրկեանին երբ մատնին անոր կը յանձնէի, մէկը չիկար, բայց եթէ մեծ կաղամախի մը որուն տակ մեր հրաժեշտը կու տայինք:

Գառնիկ պատասխանեց. — Պատրաստ եմ երդնուլ որ այդ մատանին պէս կաղամախին ալ չեմ ճանչնար:

Դատաւորը պահ մը մտածելէ վերջ ըսաւ. — Եդուարդ՝ դնա՛ այդ ծառէն ձիւղ մը բեր: Գալով քեզի Գառնիկ, հոս սպասէ մինչեւ որ դայ:

Ժամ մը վերջը երբ Եդուարդ տակաւին վերադարձած չէր դատաւորը անհամբերութեան շարժում մը ընելով ըսաւ:

— Եդուարդ ինչո՞ւ ուշացաւ, պատուհանը բաց և նայէ թէ կերելի՞ կոր:

Բայց Գառնիկ զարմացած պատասխանեց. — Տէր դատաւոր, անկարելի է որ Եդուարդ շուտ վերադառնայ, ծառը հոսկէ երկու ժամ հեռու է:

— Ա՛հ, յանդուգն ստախօսութիւն, (գոչեց դատաւորը) դուն կ'ուրանայիր ծառը ճանչնալը և հիմա անոր մասին տեղեկութիւն կու տաս: Մառին տեղը դիտցածիդ պէս՝ մատանին ալ կը ճանչնաս: Շո՛ւտ մատանին տէրօջը վերադարձուր և իբր քու նենգութեանդ պատիժ՝ բանտ պիտի տարուիս:

ԱՅՆԵՄՆԻԿ

Ձ Գ Ա Խ Է Ժ Ը

Ձգախէժը կամ Բաուչուն (քա-ուլթ-չու հնդկական բառ մըն է որմէ առած են նաև եւրոպացիք) օգտակար խէժ (ղամք) մըն է՝ որ կը վազէ Ասիոյ, Ափրիկէի և Ամերիկայի խիստ տաք երկիրներու մէջ աճող կարգ մը ծառերէ որոնք ձգախէժենի և կամ կաւչու-



Ձգախէժի ծառ

կենի կը կոչուին: Այս ծառերուն բունին հաստ կեղեւը խորունկ մը ճեղքելէ յետոյ՝ այդ ճեղքերուն տակ կը հաստատեն կամ կը բռնեն անօթներ, որոնք երկու երեք ժամուան մէջ կը լեցուին վազած խէժով: Այս կերպով այդ մածուցիկ և սպիտակ հեղուկը հաւաքելով, կը թափեն մասնաւոր կաղապարներու մէջ, ու կը թողուն արեւին տակ, որպէս զի օդին շփումէն թանձրանալով խտանայ և ճերմակ կամ դեղին գոյն մը առնէ: Ձգարմանաք եթէ ըսուի ձեզի թէ՛ աշխարհի վրայ տասը միլիոն քիլոկրամէ աւելի քաւչու կ'արտադրուի այս եղանակով, մանաւանդ Պրագիլիայէն, որուն ամէնէն շահեկան ու յարգի արտադրութիւնն է ան: Եւ սակայն այս ահագին քանակութիւնը անբաւական

ըլլալով, գիտական նորանոր միջոցներ կը փնտռուին, այդ կարելոր նիւթին արտադրութեան քանակը աւելցնելու:

Բաուչուով պատրաստուած առարկաները շատ են. մէկ քանիները թուենք: Կրկնակօշիկներ (լաստիկ կալօշ), խողովակներ, խաղի գնդակներ, տղու խաղալիքներ, անթափանց վրանոցներ, ձեր կօմ-լասթիք ըսած ձգախէժը, որ կը դործածուի դժագրութեան մէջ սխալները աւելու համար:

Կուրքաքերթա, որուն կ'ըսենք հայերէն եղջերախէժ, աս ալ քաուչուի յատկութիւնները ունի. այս խէժը կը վազէ իսոնանդո կոչուած ծառէն, որ սովորաբար Սինկարուր և Սումատրա կղզիներուն, նաև Լահոտի անտառներուն մէջ կը գտնուի. այս խէժին մէջ քիչ մը ծծումբ խառնելով կը սենայ: Ընդծովեայ հեռագրական պարանները կ'օծեն այս խառնուրդով՝ որ անթափանց ըլլալուն ջուրին խոնաւութենէն կը պաշտպանէ զանոնք:

Ասիայէն՝ տարին մէկ միլիոն քիլոկրամէն աւելի ձգախէժ կը բերուի Եւրոպա:



ՄԱՆԿԻԿԸ ԹՌՉՆԻԿԻՆ

Դուն թուիր թռչնա՛կ, ամէն առաւօտ
Լուսամուտիս մօտ,

Գեղգեղէ քիչ մը զարթնումէս առաջ,
Չայնով սիրաւաչ ։

Թող քու ճիւճիւէդ՝ աչքերըս բանամ,
Նախ դէմքս լուամ,

Ետքը քեզի պէս, երգովս առաջին,
Փառք տամ Արարչին ։

Ա. Ն. ԽԱՆԱՄԵԱՆ

×

ԱՐՓԻՆԷԻՆ ԽՕՍՔԵՐԸ

Թօփթօփիկ կլորիկ,
Հասակս է սլաքորտիկ,
Ճակատս է պայծառիկ,
Աչքերս են փայլունիկ,
Քիթիկս է գեղեցիկ,
Այտերս են խնձորիկ,
Բերանս է անուշիկ,
Ո՞վ կայ ինձի պէս աղւորիկ ։

ԱՌԱՔԵԼ Գ. ԿՈՍՏԱՆԵԱՆ

ՊԻՍԱԿՈՒԱԾ ԿԱՊԸ



(ԱՆԳՂՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱՒՈՐ ՈՍՏԻԿԱՆ

ՇԷՐԼՕՐԵ ՀՕԼՄՍԻ ԱՐԿԱԾՆԵՐԷՆ)

— Հօրեղբորս այս ընթացքէն կը հասկցուի թէ ես ու իմ խեղճ քոյրս հաճելի կեանք մը չէինք վարեր: Չէինք կրնար ծառայ պահել և տունին ամէն բանը մեր վրայ էր: Քոյրս երեսուն տարու հազիւ կար երբ մեռաւ, սակայն իր մազերը ձերմկցած էին, ինչպէս ճերմը կցած են իմիններս:

— Ձեր քոյրը մեռա՞ւ, հարցուց Շէրլօք Հօլմս:

— Այո, ճիշդ ասկէ երկու տարի առաջ մեռաւ և իր մահուան վրայ է որ կ'ուզեմ ձեզի հետ խօսիլ: Մեր վարած կիսավայրենի կեանքին մէջ առիթ չէինք ունենար մեր տարիքը ունեցող մարդոց հետ տեսնուելու կամ ընկերներ շահելու: Սակայն չամուսնացած մօրաքոյր մը ունինք, օրիորդ Օնօրիա Վէսթֆայլը, որ Հարրօլի մօտ կը բնակի: Մենք ալ երբեմն երբեմն մեր խորթ հօրմէն արտօնութիւն առնելով անոր այցելութեան կ'երթայինք: Քոյրս Ժիւլիա, երկու տարի առաջ Մնունդը անցուց մօրաքորիս քով և հոն նաւային հազարապետի մը հանդիպելով անոր հետ նշանուեցաւ: Խորթ հայրս որ նշանտուքը ըլլալ լիննալէն ետք իմացած էր գործը, ամուսնութեան արգելք չեղաւ, բայց պսակի օրէն տասնը հինգ օր առաջ տեղի ունեցաւ ահուելի տուամ մը՝ որ ինէ խլեց իմ միակ ընկերս, քոյրս:

— Շատ շատ մանրամասնութիւն տուր:

— Ատիկա դիւրին է ինձի համար, որովհետև այդ սոսկալի գիշերուան ամէն մէկ վայրկեանը իմ մտքիս մէջ խորապէս քանդակուած է: Ըսի թէ մեր տունը շատ հին էր և միայն մէկ կողմը բնակելի: Ննջասենեակները առաջին յարկին մէջ են, իսկ սրահները՝ երկրորդ յարկին մէջ: Առաջին ննջասենեակը խորթ հօրս է, երկրորդը՝ քրոջս, և երրորդը՝ իմս: Ներսէ ներս իրարու չեն հարդակցիր այդ սենեակները, բայց միևնոյն նրբանցքին վրայ կը գտնուին: Այս երեք սենեակներուն ալ պատուհանները կը նային մարգագետնին վրայ: Քրոջս մեռած դժբաղդ գիշերը՝ խորթ հայրս՝ սօքթօր Բօյլօթ կանուխէն իր սենեակը քաշուած էր բայց պառ-

կած չէր, քանի որ ժիւլիա յանկարծ սկսաւ նեղուիլ մեր խորթ հօրը սովորաբար ծխած հնդկական սիկառներու խիստ հոտէն: Ուստի, քոյրս թողուց իր սենեակը և եկաւ իմ մօտս և ժամանակ մը շաղակրատեց իր ամուսնութեան վրայ: Կէս գիշերին ժամ մը մնացած ելաւ իր սենեակը երթալու համար, բաց դրան առջեւ կեցաւ ու հարցուց ինձի.

— Հէլէն, կէս գիշերին դուն բնաւ սուլելու ձայն առա՞ծ ես:

— Բնա՛ւ, (պատասխանեցի):

— Կարծեմ թէ անկարելի է որ քնացած ատենդ սուլես դուն, այնպէս չէ՞:

— Բնականաբար. բայց ինչո՞ւ կը հարցնես:

— Որովհետեւ վերջին օրերս, առտուան դէմ, ժամը 3ին ատենները տկար բայց որոշ սուլել մը կը լսեմ: Քունս թեթեւ ըլլալով, կ'արթննամ: Չեմ կրնար հասկնալ թէ ո՞ր կից կուգայ այդ ձայնը, քովի սենեակէն թէ մարդագետինէն: Կ'ուզէի գիտնալ թէ դուն ալ կը լսե՞ս:

— Ո՛չ, բայց հաւանաբար պարտէզին անիծեալ գնչուներն են սուլողները:

— Կրնայ ըլլալ. բայց եթէ դուրսէն է, ինչո՞ւ դուն ալ չես լսեր:

— Բայց իմ քունս քուկինիդ չափ թեթեւ չէ՞:

— Օ՛հ, ատիկա մեծ բան մը չէ, աւելցուց քոյրս ժպտելով, և զատուեցաւ ինէ. վ՝յրկեան մը ետք իր դրան կղպուիլը լսեցի:

Հօլմս հարցուց. — Սովորութիւն ունի՞ք ձեր սենեակները կըղպելու:

— Մի՛շտ:

— Ինչո՞ւ:

— Ըսի թէ տօքթօրը յովազ մը և շնագլուխ կոչուած պղտիկ կապիկ մը ունէր. հետեւաբար ապահով ըլլալու համար մեր դուռները կը կղպէինք:

— Հասկցայ. ինչրե՞մ շարունակեցէք:

— Այդ գիշերը ես չի կրցի քնանալ: Նախազգացում մը եկաւ վրաս թէ այդ գիշեր դժբաղդութիւն մը պիտի գար: Քոյրս և ես երկուորեակ ըլլալով, դիւրին է հասկնալ թէ ո՞րչափ կը սիրէինք զիրար: Դուրսը գէշ օդ մը կար: Հովը կը մռնչէր և անձրեւը պատուհանները կը շաչեցնէր: Յանկարծ, մրրիկին աղմուկին մէջ՝ խենթեցած կնոջ մը յուսահատ ճիչը լսեցի, և ճանչցայ որ քրոջս ձայնն էր: Անկողինէս վար ցատքեցի, շալի մը մէջ փաթտուեցայ և վազեցի նրբացք:

(Շարունակելի)

ՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԳԵՍԱԻՈՐ ՄՐՑՈՒՄԸ
ԿԱՐԳԱԼ ԿՈՂՔԻՆ ՎՐԱՅ

«ԾԱՂԻԿ» ԵՒ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Ահաւասիկ ցանկը անցած ամիս այլևայլ վարժարաններու բո-
լոր դասարաններուն մէջ Ա. Բ. Գ. հանդիսացող աշակերտներուն
և աշակերտուհիներուն :

ԲԵՐԱՅԻ ԷՍԱԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ. — (Բ. եռամսեայի քննու-
թեանց մէջ յաջողածները) Ե. կարգէն՝ Ա. Հրանտ Բէլէշեան,
Վահրամ Զիլինկիրեան, Սիմոն Ասատուրեան :

Ս. ԳՐ. ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ. — Զ. դասէն՝ Դեր-
ձակեան Լեւոն, Քրիստիտէս Դեմետր, Թերզեան Խաչիկ : Է. դա-
սէն՝ Շահպաղ Կոպեռնիկ, Թերզեան Վահէ, Տ. Արսէնեան Արսէն,
Աճէմեան Յովսէփ :

ՎԻՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ. — Է. դասէն՝ Ա.
Օննիկ Շամբանեան, Արթիւր Մարկոսեան և Antoine Falconi :
Ը. դասէն՝ Բ. Երուանդ Մէստճեան, Georges Mavroudi և
Ռափայէլ Խաչերեան :

ԳԱՍԹԷՄՈՒՆԻԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ. — Բ. դասարանէն՝ Ա.
Արամ Հալաճեան, Բ. Վսեմ Ժամազործեան :

ԲԱԲԵՐԴԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ. — Դ. կարգէն՝ Անդ-
րանիկ Պապեան, Սիմոն Համաճեան, Խաչատուր Սափրիչեան :

ՍԱԳԸԶ ԱՂԱՃԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ. — Բ. դասարա-
նէն՝ Ա. Կղեմէս Ֆէրահեան, Բ. Միքայէլ Յարութիւնեան, Դ.
Դառլո Դուլուճեան :

ՍԻՄ-ՀԱՃԻ ԳԻՒՂԻ ԱԶԳ. ՊԱՐԹԵԻԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ. —
Բարձր. Ա. կարգէն՝ Ա. Արշակ Սօլազեան, Բ. Երուանդ Սօլազ-
եան, Դ. Յակոբ Ծառուկեան :

ԷՏԻՐՆԷԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ. — Միջին Բ. դասարանէն՝ Հայ-
կանոյշ Դրիգորեան, Արտաշէս Ս. Պէրպէրեան, Իսկուհի Ս. Եազը-
ճեան, Պարոյր Յ. Պասմաճեան, Սուքիաս Դ. Եաղուպեան :

(Շարունակելի)

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Հ Ա Շ Ի Ի Ն Ե Ր

ՀԱՇՈՒԵԳԻՐՔ ՅԱԿՈՒ Ֆ. ՏՐԷՋԵԱՆԻ

Կը պարունակէ կէս փարայէն մինչև 12 լրջ. գին ունեցող
ամէն տեսակ ապրանքներու հաշիւները :

Անհրաժեշտ ամէնուն :

Գին 5 լրջ. փոսթի ծախքով 6 լրջ. : Կը գտնուի բոլոր գրա-
վաճառներուն քով :

Արտատէր Ա. ՍԱԳԱՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՅԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐԳԵԻԱԻՈՐ ՄՐՑՈՒՄ

Ծաղիկ դպրոցներու մէջ ուսումնական ստաջիմութիւնը զարգացնելու համար բացած է պարգեւաւոր մրցում մը :

Որոշեց մասնաւոր մրցանակներ տալ այն ամէն ուսանողներուն որոնք ամբողջ ասարուան մը միջոցին աշխատասիրութեան և ուսմանց մէջ առաջ անցած են իրենց ընկերակիցներէն :

Մրցանակին մասնակցելու իրաւունք պիտի ունենան Պոլսոյ և Գաւառներու վարժարաններուն ԲԱՐՁՐԱԳՈՅՆ՝ այսինքն Շրջանաւարտ կարգերը, և անկից անմիջապէս վար եկող միւս ԵՐԿՈՒ ԿԱՐԳԵՐԸ, այսինքն մեր թաղային վարժարաններուն վրայ չափելով՝ քառարագոյն երկրորդ, քառարագոյն առաջին և միջին երկրորդ դասարանները, կամ աղգային վարժարաններէն դուրս միւս նախակրթական վարժարաններուն վերէն սկսելով Ա. Բ. և Գ. դասարանները : Այսպէս, այս երեք դասարաններէն Տարեկան Բննութեանց մէջ ԱՌԱՋԻՆ, հանդիսացող ուսանողներէն և ուսանողուհիներէն ՏԱՍԵՐԿՈՒ ՀՈԳԻ հրապուրիչ և զեղեցիկ մրցանակներ պիտի ստանան :

Ահաւասիկ մրցանակները .—

1. ԺԱՄԱՅՈՅՅ ՄՐ. (Այս ժամացոյցը հանրածանօթ ՄԷՐՃԱԼՕՅՅ վաճառատան ըրելի տուած իմպալ անուն «Օքսիտէ» տեսակէն է, որուն բանտիւր քարի վրայ կը դառնայ) :
2. ՆԻՔԷԼԷ ԶԱՐԴԱՐՈՒՆ ԿԱՂԱՄԱՐ ՄՐ, ապրանք հանրածանօթ Ռօման թղթավաճառատան, Կալաթա :
3. ՈՍԿԵԶՕԾ ԿԱՂԱՄԱՐ ՄՐ :
4. ԺԱՄԱՅՈՅՅ ՄՐ, ofuhske, ապրանք ծանօթ յանձնակատար-վաճառական էտուար Լութֆեան էֆ.ի, Պէօյիւք Միլլէթիան, Կալաթա :
5. ՊՐՕՆԶԷ ԱՐԶԱՆՈՎ ԿԱՂԱՄԱՐ ՄՐ, ապրանք՝ Բերայի Պազար s'Արքե վաճառատան, Աղաճամի, Բերա :
6. ՆԻՔԷԼԷ ԿԱՐԿԻՆԻ ԳԵՂԵՅԻԿ ԿԱԶՄԱԾ ՄՐ, ամբողջ մանրամասնութիւններով, ապրանք՝ Լէօֆլէր տպարան-թղթավաճառատան, Թիւնէյի մօտ, Բերա :
7. ԿԱՐԿԻՆԻ ԱՄԲՈՂԶ ԿԱԶՄԱԾ ՄՐ, զեղին մետաղէ :
8. ԿԱՐԿԻՆԻ ԱՄԲՈՂԶ ԿԱԶՄԱԾ ՄՐ, զեղին մետաղէ :
9. ԿԱՂԱՄԱՐ ՄՐ ՊԱՅՕՆ ՅԱՏԱԿՈՎ :
10. ՆԵՐԿԻ ԿԱԶՄԱԾ ՄՐ :
11. ԿԱՂԱՄԱՐ ՄՐ :
12. ԿԱՂԱՄԱՐ ՄՐ :

Որոշած ենք նաև հրատարակել Պոլսոյ և Գաւառի վարժարաններուն բոլոր կարգերուն մէջ, ամէն ամիս Ա. Բ. և Գ. հանդիսացող աշակերտներուն և աշակերտուհիներուն անունները :

Այս մրցումներուն մանրամասնութեանց համար կարդալ Ծաղիկի անցած 47 թիւը :

ՄԱՆՁՈՒՄԷ

Պատկերազարդ Օրաթերթ առաւօտեան: Բազաքական, գրական, գիտական, ազգային և տնտեսական: Տարեկան բաժնեգինն է Պոլսոյ համար 80, գաւառաց համար 108, իսկ վեցամսեայ Պոլսոյ համար 50 և գաւառաց համար 60 զրուշ: Ձեռքէ՛ հատը 10 փարա: Մանզումէ ամէնէն ժողովրդական օրաթերթն է Պոլսոյ, իր հաճելի և պէսպիսութեամբ լեցուն բովանդակութեան համար: Բացի ամենօրեայ խմբագրական, եկեղեցական, գրական, տնտեսական և այլ յօդուածներէ, քաղաքական, ազգային և ներքին ճոխ լուրերէ, չորեքշաբթի և շաբաթ օրերը կը հրատարակուի առեւտրական և գրական յաւելուածական էջերով:

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ՝ ազգային, գրական և ֆաղսֆական, — Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 զրշ., Յամսեայ 45 զրշ., գաւառներու համար 108 զրշ. Յամսեայ 60 զրշ. և օտար երկիրներու համար 35 Ֆր. Յամսեայ 20 Ֆր.: Ձեռքէ վաճառում՝ Տասը փարա: Խնամեալ բովանդակութիւն, ընտիր յօդուածներ, թարմ լուրեր ու նորագոյն տեղեկութիւններ: ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի՛ հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեօքումներու շնորհիւ զօրս ներմուծած է. թերթին մէջ, նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական և այլն, բաց ի գրական ու բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ: ԱՐԵՒԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն և լրագրագրին պէտք է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին էֆ. Պոյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիյէ Ճատտէսի ուր կը գտնուին թերթին տպարանն ու խմբագրատունը:

ՈՐՆ Է

Տղաքներու և դպրոցականներու համար ամէնէն աղէկ գրատունը.

— Չափնահարար Մեծ Նոր խանին սակ, ՅՈՒՀԱՆՆԷՍ ԳԸԼԸՃ-ՃԵԱՆԻ Կեդրոնական Նոր Գրատունը.